ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **06/09/2019**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Նարինե Գրիգորյանը, Սմբատ Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին
06.09.2019Թ.-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել 06.09.2019 թ.-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝
1) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2) << ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ >> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
3),,ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարական հաջորդ օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային բյուջեի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 223750 ՀՀ դրամ գումար պակասեցնել՝ ավելացնելով

- 95 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 3 դաս 3 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ոլորտի համակարգչային ծառայություններ հոդվածին (հոդված 4232) Հայկական ծրագրերի տարեկանսպասարկման ֆինանսավորման համար :
- 108750 ՀՀ դրամ բաժին 9 խումբ 1 դաս 1 նախադպրոցական կրթություն ոլորտի կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածին (հոդված 4267) ,,Եղեգնաձոր համայնքի թիվ 1մանկապարտեզ,,ՀՈԱԿ -ի կարիքների համար խոհանոցային սպասք ձեռք բերելու համար :
- 20 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 1 դաս 1 ոլորտի տեղեկատվական ծառայություններ հոդվածին (հոդված 4234) Հայաստանի Հանրապետություն թերթում հայտարարությունների հրապարակման ֆինանսավորման համար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

Լսեցին
<< ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ >> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջներով.

1. Տալ համաձայնություն Գվիդոն Հեկտորի Հարությունյանին <<Եղեգնաձորի համայնքային տնտեսություն >> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարական հաջորդ օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75/

Լսեցին
,,ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենիքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

1. Հաստատել << Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը / համաձայն հավելվածի/:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 17.12.2018թ.-ի թիվ 98 ,,ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> որոշումը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ԱԼՈՅԱՆ

ԱՐՏԱՇ ԱՅՎԱԶՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՍԱՔԱՆՅԱՆ

ՎԱԼՈԴՅԱ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց Անժելա Սարգսյանը